ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի սեպտեմբերի 4-ից 7-ը

Ղազախստանի Հանրապետություն (ք. Աստանա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Տիգրան Գաբրիելյան - ՀՀ ՊԵԿ արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության պետի տեղակալ

Արամ Սայամյան - ՀՀ ՊԵԿ արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության մաքսային գործառնությունների սպասարկման թիվ 1 բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ղազախստանի Հանրապետություն, ք. Աստանա, սեպտեմբերի 4-ից 7-ը

3. Հրավիրող կողմը՝

Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական եկամուտների կոմիտե

4. Գործուղման նպատակը /աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը՝

Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիային (այսուհետ՝ ԵԱՏՄ ՄԾՄԿ) կից՝ ապրանքների դասակարգման հարցերով աշխատանքային խմբի հերթական՝ 49-րդ նիստին մասնակցություն

5. Քննարկված թեմաները՝

ԵԱՏՄ ՄԾՄԿ կից՝ աշխատանքային խմբի 49-րդ նիստի օրակարգում ընդգրկված ավելի քան 38 առանձին տեսակի ապրանքների (հիբրիդային տրանսպորտային միջոցներ, սննդամթերքի տարատեսակներ, ավտոմեքենայի բեռնախցիկի բացման-փակման

մեղմացուցիչներ, նավթամթերք, հագուստի պարագաներ և այլն) դասակարգման հիմնահարցերի քննարկում, դիրքորոշումների համաձայնեցում և միասնական մոտեցումների մշակում

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Օրակարգում ընդգրկված ապրանքների դասակարգման վերաբերյալ առարկայական քննարկումներին ակտիվ մասնակցություն, արդեն իսկ մշակված ԵԱՏՄ ՄԾՄԿ դասակարգման վերաբերյալ որոշումների նախագծերի վերջնական համաձայնեցում

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Օրակարգում ընդգրկված խնդրահարույց ապրանքների դասակարգման վերաբերյալ միանման մոտեցումների մշակման անհրաժեշտության նպատակով ԵԱՏՄ ՄԾՄԿ աշխատանքային խմբի աշխատանքների շրջանակներում ներկայումս մշակվում են առանձին տեսակի ապրանքների դասակարգման վերաբերյալ ԵԱՏՄ ՄԾՄԿ որոշումների նախագծեր, որոնց ընդունմամբ դրանք տեղ են գտնելու ազգային նորմատիվ ակտերում դասակարգման վերաբերյալ պարզաբանումների տեսքով, որոնք կոչված են նպաստելու ապրանքների միատեսակ դասակարգմանը: Հարկ է նշել, որ նշված աշխատանքային խմբի գործունեության շրջանակներում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում և լայն թափ է ստացել Համաշխարհային մաքսային կազմակերպության Ներդաշնակ Համակարգի կոմիտեի տարբեր նստաշրջաններում ընդունված որոշումների կիրարկման նպատակով ԵԱՏՄ ՄԾՄԿ որոշումներում դրանց ընդգրկումը, որոնք այնուհետև արտացոլվում են ազգային օրենսդրության մեջ (ՀՀ ՊԵԿ պարզաբանումների տեսքով) և այդպիսով հասանելի են դառնում ԱՏԳ իրականացնողների առավել լայն շրջանակների համար:

ԵԱՏՄ ՄԾՄԿ-ին կից՝ ապրանքների դասակարգման հարցերով աշխատանքային խմբի 49-րդ նիստում համաձայնեցվեց ԵԱՏՄ ՄԾՄԿ դասակարգման վերաբերյալ որոշման մոտ 22 որոշման նախագիծ, որոնք նախատեսված են ընդունման ս.թ. սեպտեմբերի 27-ին ՌԴ-ում (ք.Նիժնի Նովգորոդ) կայանալիք ԵԱՏՄ ՄԾՄԿ հերթական՝ 47-րդ նիստի ընթացքում: Միաժամանակ, նիստն ամփոփվեց ընդարձակ արձանագրության ստորագրությամբ, որը

ենթադրում է յուրաքանչյուր քննարկված հարցերի մասով գրավոր դիրքորոշումների և դասակարգման վերաբերյալ որոշումների նախագծերի՝ ԵԱՏՄ ՄԾՄԿ քարտուղարության ներկայացում՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

ԵԱՏՄ ՄԾՄԿ դասակարգման վերաբերյալ որոշումների նախագծերն ամփոփվում են՝

- ԵԱՏՄ ՄԾՄԿ որոշումների տեսքով (բոլոր անդամ-պետությունների միաձայն համաձայնության դեպքում), որոնց հիման վրա ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 21-րդ հոդվածին համապատասխան՝ հրապարակվում են առանձին տեսակի ապրանքների վերաբերյալ ԵԱՏՄ անդամ-պետությունների մաքսային մարմնի պաշտոնական պարզաբանումների տեսքով: Այդպիսի որոշումները կոչված են ապահովելու ապրանքների **միատեսակ դասակարգումը** կամ
- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշումների տեսքով (կոնսենսուսի բացակայության դեպքում), որոնք պարտադիր են բոլոր անդամ-պետությունների համար:

Միաժամանակ, ՌԴ դաշնային մաքսային ծառայության կողմից առաջարկի հիման վրա դիտարկվում է նշված աշխատանքային խմբի ընդլայնման նպատակահարմարությունը՝ ապրանքի ծագմանն առնչվող հարցեր ներառելու միջոցով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Տիգրան Գաբրիելյան՝

Արամ Սայամյան՝

10.09.2024թ.